

Հ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱՍԻՆՈՒԹ

ՆԱԶԱՐՅԱՆ ՀԱՅԿ ՎՈԼՈԴԻԵԱՆ

ՄԵԾ ՔՐԻՍՏՈՆԵԱՑ ԱՇԽԱՉԱԿԱԶՄԱԿԱԿԱՆ ՇԱՀԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՅՄՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԱՌԱՋԻՆ
ՀԱՍՏԵՄԱՐՁԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՏԱՐԲՆԵՐԻՆ
(1914 - 1918 թթ.)

Է.00.02 - «Համաշխարհային պատմություն, միջազգային
հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման առենախտության
սեղմագիր

Հարթակության պարագաները
Խորհրդական պատմություններ
Հ. Էպիզոդ Ա/6

ԵՐԵՎԱՆ - 2018

Ասենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱՍՏ Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդում:

Գիտական դեկան՝ պ. գ. դ., պրոֆեսոր Լևոն Շիրինյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ. գ. դ., պրոֆեսոր Մամիկ Պողոսյան
պ. գ. թ., դոցենտ Լիլիթ Հովհաննիսյան

Առաջատար կազմակերպություն՝ Խաչատուր Աբովյանի անվան
հայկական պետական մանկավարժական համալսարան

Ասենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018 թ.
դեկտեմբերի 27-ին ժամը 12:00-ին, ՀՀ ԳԱՍՏ Արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդում (հասցե 0019, ք. Երևան,
Սարշալ Բաղրամյան 24/4)

Ասենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱՍՏ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առարկած է 2018թ. նոյեմբերի 16-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝


պ. գ. թ. Գ. Սարգսյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴԱԾՈՒՄԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Արևելքն ու Արևմուտքն իրար կապող առևտրական ճանապարհների խաչմերուկ հանդիսացող և բարենպաստ աշխարհագրական դիրք զբաղեցնող Հայաստանն ու Այսրիվլկասը հնագույն ժամանակներից ունեցել են աշխարհառազմավարական կարևորագույն նշանակություն: Այն ավելի մեծացավ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և հատկապես պատերազմի տարիներին, երբ տարածաշրջանում բախվում էին Եվրոպական Մեծ տէրությունների Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի, Գերմանիայի և Ֆրանսիայի աշխարհառազմավարական շահերը:

Մեր օրերում այսրկովկայան և մերձավորարևելյան տարածաշրջաններում կրկին բախվում են նոյն աշխարհաբարդարական կենտրոնների աշխարհառազմավարական շահերը, ինչն արտացոլվում է Արցախյան, Հարավոսական, Արխազական հակամարտություններում, Սիրիական պատերազմում, հնարավոր քրդական միացյալ անկախ պետության ստեղծման հարցում, Իրանի շուրջ ընթացող զարգացումներում: Շարունակում է արդիական մնալ նաև Հայկական հարցը, ինչին նպաստում է նաև Թուրքիայի կողմից Ստամբուլի ջրանցքի կառուցման նախագծի առաջ քաշումը:

Մեր ժամանակներում շարունակվում է նաև պայքարը բնական ռեսուրսների համար: Մասնավորապես, եթե Մեծ Բրիտանիան 20-րդ դարասկզբին «Անգլ-պարսկական նավթային ընկերության» միջոցով եր ձգուում իր ձեռքում պահել տարածաշրջանի նավթային պաշարները, ապա այդ նոյն քաղաքականությունը 21-րդ դարասկզբին Լոնդոնը վարում է անվանափոխված նոյն ընկերության՝ «Բրիտիշ Փերուլիումի», միջոցով: Վերջինս այսօր, հատկապես, առանցքային աշխարհատնեսական կշիռ ունի Արքեօնում, և ակտիվութեան ներգրավված է Ապշերոնյան թերակղում ու Կասպից ծովում նավթարյունահանուման և Այսրկովկաստվ ձգուու նավթասար ու գազատար խողովակաշարերի շահագործման գործում:

Ավելին, 2018 թվականին աշխարհը նշում է Առաջին համաշխարհային պատերազմի ավարտի, իսկ Հայաստանն ու հայկական Սփյուռք՝ Մայիսյան հերոսամարտերի, Հայաստանի Առաջին Հանրապետության հոչակման, Բարվի հերոսական պաշտպանության ու Արարայի հաղթական ճակատամարտի 100-ամյա հորեւյանները, ինչն էլ ավելի է արժնությունը:

Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները: Ստենախոսության նպատակն է հանգամանորեն ուսումնասիրել Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Մեծ Բրիտանիայի աշխարհառազմավարական շահերը Հայաստանում ու Այսրկովկասում: Մասնավորապես աշխատանքը խնդիր ունի հանգամանորեն լրատարանել առանցքային հետևյալ հարցերը.

1. Բրիտանական աշխարհառազմավարազիտական և ռազմավարագիտական մտքի ձեսվորումը:

2. Հայաստանի և Այսրկովկասի աշխարհառազմավարական նշանակությունը Մեծ Բրիտանիայի համար:

3. Մեծ տերությունների միջև ուժերի ռազմավարական հաշվեկշռում հայսնված Հայկական հարցի հետ ուղղակիորեն կապված Աւծովյան ներուցների խնդիրը, այդ թվում Դարդանելյան (Գալիպոլի) ռազմագործողությունը:

4. Ուժերի ռազմավարական հարաբերակցությունը մերձավորաբեկյան տարածաշրջանում «Սայրս - Պիկո» համաձայնագրի ձեսվորման փուլում:

5. Բրիտանական նոր ռազմավարությունը Հայաստանում և Այսրկովկասում՝ Երզնկայի գինադադարի ստորագրմանն հաջորդած ժամանակահատվածում:

6. Քարու ժամանած բրիտանական ռազմական առարելության «առեջծվածք»:

7. Մայիսան հերոսամարտերի և Բարվի պաշտպանության ռազմավարական նշանակությունը:

8. Սուլրոսի գինադադարի ստորագրմանը նախորդած ժամանակահատվածում Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև ընթացած դիվանագիտական գաղտնի պայքարը:

Առենախոսության ժամանակագրական շրջանակները: Մեր աշխատանքի ժամանակագրական շրջանակն ընդգրկում է Առաջին համաշխարհային պատերազմի տարիները (1914-1918 թթ.): Թեմայի ուսումնասիրությունը, սակայն, պահանջում է հանգամանորեն անդրադառնալ նաև 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին բրիտանական աշխարհառազմավարազիտական մտքի ձեսվորմանը և պատերազմին նախորդած ժամանակահատվածում մերձավորաբեկյան տարածաշրջանում տիրող ռազմաքաղաքական ընդհանուր իրավիճակին, ինչը մեր կողմից նույնպես իրականացվել է:

Ուսումնասիրության մեթոդաբանությունը: Հետազոտության մեթոդաբանության հիմքում ընկած են աղբյուրների համադրման, պատմահամեմատական, պատմապատճենական, պատմավերլուծական մեթոդները և պատմականության սկզբունքը: Առենախոսության

շարադրանքի հաջորդականությունը պայմանավորված է թեմատիկ և ժամանակագրական սկզբունքներով:

Առենախոսության գիտական նորույթը: Աշխատանքի թեման ամբողջական առաջին անգամ ներկայացվում է գլխավորապես աշխարհառազմավարության և ռազմական ռազմավարության դիտանկյունից հիմքում ունենալով «ուժերի ռազմավարական հարաբերակցության» և «ուժերի ռազմավարական հավասարակշռության» սկզբունքները: Աշխատանքում արտացոլված է «Ծովային ուժի», «Հարթլենդի», «Սահմանափակ ու անուղղակի գործողությունների», «Ուրիշի ձեռքերով պատերազմելու» բրիտանական ռազմավարազիտական տեսությունների գրձնականում կիրառումը բրիտանացիների կողմից Ասիական ռազմաճակատներում Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ: Միաժամանակ, սակայն, չենք անտեսել Մեծ տերությունների միջև ընթացող դիվանագիտական պայքարը:

Մեր կողմից սկզբնաղյուրների, այդ թվում արխիվային նյութերի և հուշագրական գրականության, ուսումնասիրության արդյունքում աշխատանքում նոր լուսի ներք են ներկայացվել այնպիսի առանցքային հարցեր, ինչպիսիք են գերմանական հածանավերի մուտքը Դարդանել, Դարդանելյան (Գալիպոլի) ռազմագործողությունը, Կուտ-է-Ամարայում պաշարված բրիտանական գրախմբի անձնատուր լինելու հանգամանքը, ուժերի ռազմավարական հարաբերակցությունը «Սայրս - Պիկո» համաձայնագրի ձևավորման շրջանում, Մայիսան հերոսամարտերի և Բարվի պաշտպանության ռազմավարական նշանակյունների տարած հաղթանակի գործում, Բարվում Բրիտանական ռազմական առարելության գործունեությունը, Երզնկայի ու Մուլրոսի գինադադարների համաձայնագրերը: Թեմայի ուսումնասիրությունն ամբողջացնելով առաջ ենք քաշել գիտական նոր տեսություններ և հարցադրումներ:

Առենախոսության կիրարական նշանակությունը: Թեմայի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս Հայաստանի Հանրապետության աշխարհառազմավարական շահերից դիտարկելու և խորթյամբ հասկանալու մեր օրերում տարածաշրջանում ընթացող աշխարհարադարական գործընթացները:

Առենախոսության փորձաքննությունը: Առենախոսությունը քննարկվել և հրապարակյան պաշտպանության է երաշխավորվել ՀԱՍՍ Արևելագիտության ինստիտուտի Միջազգային հարաբերությունների բաժնում: Քննարկման մասնակիցների կողմից արված նկատառումները հաշվի են առնվել ատենախոսության վերջնական տարբերակում: Ուսումնասիրության հիմնական

դրույթներն ու եզրահանգումները լուսաբանվել են հեղինակի հրատարակված հոդվածներում:

Հետազոտության աղբյուրագիտական հիմքը և հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանը: Աստենախոսությունը գրվել է հայերեն, ուստերեն ու անգլերեն սկզբնաղբյուրների և գիտական գրականության հիման վրա: Թեմայի ուսումնասիրության համար բացառիկ նշանակույթունը ունեն արիվալյային նյութերը: Սանափորապես, աշխատանքը գրելիս օգտվել ենք Հայաստանի ազգային արիվիի մոտ երեք տասնյակ ֆոնդերի շուրջ յոթ տասնյակ գործերից¹:

¹ Ֆ. 45 (Գեներալ Թովմաս Նազարելյանի անձնական ֆոնդ), ց. 1, գ. 32: Ֆ. 56 (Եջմիածնի Սուրբ Մինոյ), ց. 13, գ. 257, գ. 831, գ. 844: Ֆ. 57 (Ամենայն հայոց կաթողիկոսի դիվան), ց. 1, գ. 618: Յ. 5, գ. 80, գ. 115, գ. 149: Ֆ. 113 (ՀՀ կառավարություն), ց. 3, գ. 1: Ֆ. 199 (Հայաստանի Առաջին Հանրապետության Մինիստրների խորհուրդ), ց. 10, գ. 32 մաս 2: Ֆ. 200 (Հայաստանի Առաջին Հանրապետության Արտաքին գործերի մինիստրություն), ց. 1, գ. 5, գ. 7, գ. 9, գ. 12, գ. 21, գ. 27, գ. 23, գ. 57, գ. 155, գ. 158, գ. 161, գ. 209, գ. 254, գ. 291 մաս 1, գ. 291 մաս 2, գ. 351, գ. 353, գ. 441: Յ. 2, գ. 11, գ. 28: Ֆ. 201 (Հայաստանի Առաջին Հանրապետության Ներքին գործերի մինիստրություն), ց. 1, գ. 44, գ. 45, մաս 1: Յ. 2, գ. 602: Ֆ. 204 (Հայաստանի Առաջին Հանրապետության Ռազմական նախարարության ռազմասեփական վարչություն), ց. 1, գ. 43: Ֆ. 223 (Բարձրի հայոց ազգային խորհուրդ), ց. 1, գ. 112: Ֆ. 247 (Քարտեզների հավաքածու), ց. 3, գ. 70, գ. 186: Ֆ. 275 (Հայաստանի Առաջին Հանրապետության դիվանագիտական ներկայացուցություններ), ց. 6, գ. 19: Ֆ. 370 (Զորավար Անդրանիկ Օզմյանի անձնական ֆոնդ), ց. 1, գ. 39: Յ. 3, գ. 64: Փ. 374 (Թուրքահայաստանի և Թուրքիայի այլ մարզերի գեներալ-կոմիսարիատի երգուստի մարզի կոմիսարի վարչություն), ց. 1, գ. 1, գ. 4: Ֆ. 411 (Քրիտանացի պիտական-բաղադրական գործիչ, գործարար, ճանապարհորդ Հենրի Լինչի անձնական ֆոնդ), ց. 1, գ. 182, գ. 227, գ. 229, գ. 239, գ. 248: Ֆ. 412 (Արևելագետ Արշակ Սաֆրանոսյանի անձնական ֆոնդ), ց. 1, գ. 61, գ. 2356 գ. 2551, գ. 2356: Ֆ. 424 (Հասարակական-բաղադրական գործիչ Արտակ Դարբինյանի անձնական ֆոնդ), ց. 1, գ. 4: Յ. 2, գ. 201: Ֆ. 430 (Հայոց Ազգային պատվիրակություն), ց. 1, գ. 584, գ. 616, գ. 1130, գ. 1043, գ. 1320, գ. 1386: Ֆ. 450 (Փաստաթղթերի հավաքածու Հայկական հարցի վերաբերյալ), ց. 1, գ. 54: Ֆ. 476 (Պատմաբան Հայկագուն Գալստյանի անձնական ֆոնդ), ց. 1, գ. 3016: Ֆ. 477 (Պետական գործիչ Ստեփան Դորդանյանի անձնական ֆոնդ), ց. 1, գ. 1: Ֆ. 502 (հասարակական-բաղադրական և պետական գործիչ Գևորգ Մելքոն Կարակողովի անձնական ֆոնդ), ց. 1, գ. 108, գ. 189: Փ. 1021 (ՀԿԿ ԿԿ-ի կուսակցության պատմության ինստիտուտ - ԽՄԿԿ ԿԿ-ին առընթեք ՄԼԻ-ի հայկական մասնաճյուղ), ց. 2, գ. 962: Ֆ. 1169 (Պատմաբան Արգար Ռուբենի Խոնիսյանի անձնական ֆոնդ), ց. 1, գ. 52: Ֆ. 1262 (Կովկասի փոխարքայի գրասենյակ), ց. 2, գ. 191, ց. 3, գ. 243: Ֆ. 1267 (Փաստաթղթական նյութերի հավաքածու՝ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Կովկասյան ռազմածակատում հայկական կամավորական դրուժինաների և

Թեմայի վերաբերյալ արժեքավոր սկզբնաղբյուր են հանդիսանում հայկական, բրիտանական, ֆրանսիական, ռուսական, գերմանական, ամերիկյան արիվալյան պահպող փաստաթղթերի ու նյութերի հիման վրա հրատարակված ժողովածուները: Հատկապես արժեքավոր են ուս պատմաբան Եվգենի Աղամովի խմբագրությամբ հրատարակված «Սահական Թուրքիայի բաժանում»² և «Կոստանդնուպոլիսը և Սեղուցները»³, պատմաբան Աշոտ Հովհաննիսյանի խմբագրությամբ հրատարակված «Հայաստանի միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության վաստական Արքուն 1828-1923»⁴, ֆրանսահայ պատմաբան Արքուն Պեյլերյանի խմբագրությամբ հրատարակված «Մեծ տերությունները. Օսմանյան կայսրությունը և հայեր ֆրանսիական արիվալյան 1914-1918»⁵, բրիտանացի պատմաբան Անիսոս Բարդերի խմբագրությամբ հրատարակված «Հայաստան. Քաղաքական և էրնիկ սահմանները 1878-1948 թվականներին»⁶, սիյուռնահայ պատմաբան Վաչե Ղազարյանի խմբագրությամբ հրատարակված «Պոդոս Նորարի թղթերը և Հայկական հարցը 1915-1918»⁷, պատմաբան Գայանե Մախմուրյանի խմբագրությամբ հրատարակված «Հայաստանը ԱՄՆ-ի

հայկական կանոնավոր գործամասերի մասնակցության մասին», ց. 1, գ. 1, գ. 33, գ. 41: Յ. 2, գ. 97, գ. 105: Փ. 1437 (Հեղափոխական գործիչ Ստեփան Շահումյանի անձնական ֆոնդ), ց. 1, գ. 234, գ. 238: Յ. 3, գ. 11:

² Раздел Азиатской Турции. По секретным документам б. Министерства Иностранных дел. Под ред. Е. А. Адамова. Москва, Литиздата НКИД, 1924.

³ Константинополь и проливы. По секретным документам б. Министерства иностранных дел, том 1, Под ред. Е. А. Адамова. Москва, Изд. Литиздата НКИД, 1925: Константинополь и проливы. По секретным документам б. Министерства иностранных дел, том 2, Под ред. Е. А. Адамова. Москва, Литиздата НКИД, 1926.

⁴ «Հայաստանի ավտոնոմիան» յել Անտանտան. Վավերագրերի խմբերի հայկական պատմաբանի շրջանից. Ա. Հովհաննիսյանի առաջարանով. Յերևան, Պետիքատ, 1926:

⁵ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության վաստական գործիչ վարչություն 1828-1923. Խմբ.՝ պրոֆ. Զ. Ս. Վիրակովյանի. Երևան, «Հայաստան», 1972:

⁶ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայեր ֆրանսիական արիվալյան 1914-1918, 2 հատորով. կազմով Ա. Պեյլերյան. թարգմ. ֆր. Երևան, «Հայաստան» («Գրական հայերնիբ»), 2005:

⁷ Armenia. Political and ethnic boundaries. 1878-1948. Ed. By Anita L. P. Burdett. London, Archive Editions, 1998:

⁸ Boghos Nubar's papers and the Armenian Question 1915-1918. Documents. Ed. and tr. by Vatche Ghazarian. Waltham, Mayreni Publishing, 1996.

Պետական քարտուղարության փաստաթղթերում 1917-1920թթ.⁹, պատմաբաննի Վիրաբյանի խմբագրությամբ հրատարակված «Հայերը առաջին համաշխարհային պատերազմում (1914-1918 թթ.)»¹⁰ փաստաթղթերի ժողովածուները:

Թեմայի վերաբերյալ կարևորագույն սկզբնաղյուր են հանդիսանում նաև ժամանակի իրադարձությունների անմիջական մասնակիցները, հատկապես, պետական և ռազմական գործիչների՝ հուշագրությունները: Մասնավորապես Մեծ տերությունների միջև ծավալված աշխարհառմավարական և դիվանագիտական պայքարի, Օսմանյան կայսրության տարածքների բաժանման վերաբերյալ «Սայր - Դիլո» համաձայնագրի ձևափորման վերաբերյալ մեծ հետաքրքրություն են ներկայացնում Մեծ Բրիտանիայի վարչապետներ Հերբերտ Ասթվիտի¹¹ և Դեյվիդ Լոյդ Ջորջի¹², Մեծ Բրիտանիայի Ծովակալության Առաջին լորդ Ուիլնարոն Չերչիլի¹³, Մեծ Բրիտանիայի Արտաքին գործերի քարտուղար Էդուարդ Գրեյի¹⁴, Ռուսաստանում Մեծ Բրիտանիայի դեսպան Զորշ Բյուկենենի¹⁵, Ֆրանսիայում Մեծ Բրիտանիայի դեսպան Ֆրենսիս Բերտիի¹⁶, Ռուսաստանի Արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Սերգեյ Սագոնիի¹⁷, Ֆրանսիայի նախագահ Ռայմոնդ Պուանկարեի¹⁸, Ռուսաստանում

Ֆրանսիայի դեսպան Մորիս Պալեոլոգի¹⁹, Օսմանյան կայսրության մազմածովային նախարար Ջեմալ փաշայի²⁰ հուշագրությունները:

Դարդանելյան ռազմագործողության վերաբերյալ հետաքրքրի մանրամասներ են պարունակում Մեծ Բրիտանիայի Ծովակալության լորդ, ծովակալ Ջոն Ֆիշերի²¹, Գալխաղի ափ իջած Դաշնակիցների երսպեղիցին բանակի հրամանատար, գեներալ Յան Համիլտոնի²², բրիտանական հետախուզության սպա Կոմանդոն Սարենգիի²³, Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Սորգենբաուի²⁴, Օսմանյան կայսրությունում գործող գերմանական ռազմական առաքելության դեկանար, գեներալ Լիման ֆոն Սանդերսի²⁵, Օսմանյան բանակի հրետանու սպա Սարգիս Թորոսյանի²⁶, Կոստանդնուպոլսում աշխատած գերմանացի լրացրող Հարի Սոյուրմերի²⁷ հրատարակած հուշերը:

Կուտ-Էլ-Ամարայում օսմանյան բանակի կողմից պաշարված բրիտանական զորախմբի անձնատուր լինելու և արարական նշանավոր ապատամբության վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ են պարունակում պաշարված զորախմբի հրամանատար, գեներալ Չարլզ Թաունսենդի²⁸ բրիտանական հետախուզության հայտնի սպա

⁹ Армения в документах Государственного департамента США 1917-1920гг. Сост. и пер. с англ. Г. Г. Махмурян. Ред. В. Казахециан. Ереван, «Лусакн», 2011.

¹⁰ Армяне в Первой мировой войне (1914-1918гг.), Документы и материалы. Под ред. А. С. Вирабян, В. Б. Арцруни, А. С. Василенко. Москва, Российский писатель, 2014.

¹¹ Asquith H. H. The Genesis of the War. New York, George H. Doran Company, 1923.

¹² Lloyd George D. The truth about the peace treaties. in 2 volumes. London, Victor Gollancz LTD, 1938. Ллойд Джордж Д. Военные мемуары. Пер. с англ., том 1-2. Москва, Соцэкиз, 1934.

¹³ Churchill W. The world crisis. The Aftermath. London. Thornton Butterworth Limited. 1929: Churchill W. S. The world crisis. vol. 1. London, Odhams Press, 1938.

¹⁴ Viscount Grey of Fallodon. Twenty-five years. in 2 volumes. New York, Frederick A. Stokes Company, 1925.

¹⁵ Бьюкенен Дж. Мемуары дипломата. Пер. с англ., Москва, Госиздат, 1925.

¹⁶ Лорд Берти. За кулисами Антанты. Дневник британского посла в Париже 1914-1919. Пер. с англ., Москва-Ленинград, Госиздат, 1927.

¹⁷ Сазонов С. Д. Воспоминания. Москва, «Международные отношения», 1991.

¹⁸ Пуанкаре Р. На службе Франции. Воспоминания за девять лет. Пер. с фр., том 5, Москва, Соцэкиз, 1936.

¹⁹ Палеолог М. Царская Россия накануне революции. пер. с фр., Москва, «Политиздат», 1991.

²⁰ Djemal Pasha. Memories of a Turkish statesman. 1913-1919. New York, George H. Doran Company, 1922.

²¹ Fisher J. Memories. London, New York, Hodder and Stoughton, 1919: Fisher J. A. Memories and records. in 2 volumes. New York, George H. Doran company, 1920.

²² Hamilton Ian. Gallipoli Diary. in 2 volumes. London, Edward Arnold, 1920.

²³ Mackenzie. Gallipoli Memories. Garden City-New York, Double day, Doran and Company, 1930.

²⁴ Morgenthau H. Ambassador Morgenthau's story. Detroit, Wayne State University press, 2003. Morgenthau H. Secrets of the Bosphorus. London, Hutchinson and Co., 1918.

²⁵ Sanders Liman von. Five years in Turkey. Nashville, The battery press, 2000.

²⁶ Թորոսյան Ս. Դարդանելից մինչև Պահեստին. թարգմ. անգլ., Երևան, Հայոց գեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2012:

²⁷ Stuermer H. Two war years in Constantinople. Sketches of German and Young Turkish Ethics and politics. Tr. from German. New York, George H. Doran Co., 1917.

²⁸ Townshend C. V. F. My campaign. vol. 2. New York, The James A. McCann Co., 1920.

Լոռիքենս Արաբացու²⁹, Օսմանյան բանակում ծառայություն անցած վենետիկացի սպա Մաֆալել է Նորվիկի³⁰ հուշերը:

Բարվի պաշտպանության և այդ օրերին բաղադ ժամանած բրիտանական ռազմական առաքելության գործունեության մանրամասներն իրենց արտացոլումն են գտել առաքելության դեկավար, գեներալ Լիոնել Շանստերվիլի³¹ և Յարական բանակի հայագիտ նշանավոր գեներալ Գավրիլ Կորզանովի³² հուշերում:

Սուլրոսի գինադադարի ստորագրմանը նախորդած օրերին Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև ընթացած զաղտնի դիվանագիտական պարքարի վերաբերյալ բացառիկ տեղեկություններ կան Դ. Լոյդ Ջորջի, Շ. Թատունենդի, Մեծ Բրիտանիայի Ռազմական կարինետի բարտութար, Մորիս Հենկիի³³ հույսերում:

Թեմայի վերաբերյալ ստեղծվել է նաև գիտական հակայական գրականություն: Մասնավորապես առանցքային նշանակություն ունեն բրիտանական աշխարհառազմավարագիտական և ռազմառազմավարագիտական մտքի խոշոր ներկայացուցիչների՝ «Հարթենդի» մասին տեսության հիմնադիր, աշխարհագրագետ Զալֆորդ Մարինդերի³⁴, «Ծովային ուժի» մասին տեսության հիմնադիրներից ծովակալ Ֆիլիպ Կոլոմբի³⁵ ու ռազմածովային տեսաբան Ջուլիան Կորբետի³⁶, «Անուղղակի գործողությունների ռազմավարության» տեսության հիմնադիր, խոշոր ռազմավարագետ Լիդել Հարտի³⁷, ինչպես նաև բրիտանական աշխարհառազմավարագիտական մտքի խոշոր ներկայացուցիչ լորդ

²⁹ Lawrence T. E. Seven pillars of wisdom. A Triumph. Garden City - New York, Doubleday, Doran & Co., 1935.

³⁰ Де Ногалес Р. Четыре года под Полумесяцем. Пер. с исп., Москва, Русский Вестник 2006.

³¹ Dunsterville L. C. The adventures of Dunsterforce. London, Edward Arnold, 1920.

³² Корганов Г. Г. Участие армян в Мировой войне на Кавказском фронте (1914-1918). Пер. с фр. Москва: МАКС Пресс, 2011.

³³ Lord Hanken. The Supreme Command. 1914-1918, vol. 2. London, George Allen and Unwin LTD, 1961.

³⁴ Mackinder H. J. Britain and British seas. London, William Heinemann, 1902.
Mackinder H. J. The Geographical pivot of History. «The Geographical journal», London, april 1904, vol. 23, No. 4, p. 421- 443. Mackinder H. J. Democratic ideals and reality; a study in the politics of reconstruction. London, Constable and Company, LTD, 1919.

³⁵ Colomb P. H. Naval Warfare. Its ruling principles and practice historically treated. London, W. H. Allen And Co., 1899.

³⁶ Corbett J. S. Some Principles of Maritime Strategy. London, Longmans, Green and Co., 1899.

³⁷ Liddell Hart B. H. The strategy of indirect approach. London, Faber and Faber, 1954.

10

Զորք Քերպնի երկհատորյակ «Պարսկաստանը և Պարսկական հարցը»³⁸, իմանաբար աշխատությունները:

Սևծովյան նեղուցների, Հայաստանի ու Այսրկովկասի աշխարհառազմավարական նշանակության, Հայկական հարցը Մեծ տերությունների միջև առկա ուժերի ռազմավարական հաշվեկշռում դիտարկելու վերաբերյալ արմեռավոր աշխատանքներ են հայկական աշխարհաբաղաբագիտական մտքի հիմնադիր Հայկ Աստորյանի «Հայաստան - Արքական նախադիրը Առաջավոր Ասիայում»³⁹, Ռուբեն Տեր Մինասյանի «Հայաստան միջ-ցամաքային ուղիներու վրա»⁴⁰, սփյուռքահայ պատմաբան Վահան Նավասարդյանի «Նեղուցները (Վոսփոր և Դարդանել)։ Թրքական ջրուղիները և Հայ դաւր»⁴¹, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լևոն Շիրինյանի «Ուուքեն. Հայաստանի վերակերտումի ռազմավարությունը»⁴² և «Նոր աշխարհակարգը և Հայաստանը»⁴³, ինչպէս նաև պրոֆեսոր Լ. Շիրինյանի, քաղաքագետ Էմիլ Օրդուիանյանի և քաղաքագետ Հայկ Սուրբիասյանի համահեղինակությամբ իրատարակված «Հայոց Ցեղասպանության երկրաբանական համատեսուր և Հայկական հարցի էվլույցիան»⁴⁴.

Սուաշին համաշխարհային պատերազմին նախորդող շրջանում Հայկական հարցում Մեծ Քրիստոնիայի վարած քաղաքականությունը խորությամբ ներկայացված է պատմական գիտությունների դրսոր, պրոֆեսոր Արման Կիրակոսյանի «Քրիստոնական դիվանագիտությունը և արևմտահայության իննդիրը (19-րդ դարի 30-ական թթ. - 1914)»⁴⁵ և պատմաբան Լևոն Բայրամյանի «Արևմտյան Հայության անգիտական իմաստերիալիզմի պանսներում. XIX դարի

³⁸ Curzon G. N. Persia and the Persian Question. in 2 volumes. London, Longmans, Green And Co., 1892.

³⁹ Ասատրյան Հ. Հայաստան-Արիական նախադիրք Առաջավոր Ասիայում. Եղվանդ Ա. հ. 2000:

⁴⁰ Օռուբեն. Հայաստան միջ-ցամաքային ուղիներու վրայ. Ս. Արեւելքի ժողովածունեական հետեւանք. Թիւրքաց Խ. է. 1924.

⁴¹ Նավասարդյան Վ. Նեղուցները (Պոսփիր և Դարդանել). Թբիլիսի ջրուղիները և նավագործությունը, 2, 11-12, 2, 1984:

⁴² Շիրիկյան Լ. Ծովեկն. Հայաստանի վերակերտումի ռազմավարությունը. Խաչի Ծանոթագիր, էջ 52-53:

⁴³ Շիրինյան Լ. Նոր աշխարհակարգը և Հայաստանը. Երևան, «Լուսակն», 2006:

⁴⁴ Ծիրիսյան Լ., Օրդուկսանյան Է., Սութքասյան Հ. Հայոց Ցեղասպանության երկրաբաղարական համատեքստը և Հայկական հարցի էվոլյուցիան. Երևան, «Գիտություն», 2016:

Դ Վրիակոսյան Ա. Բրիտանական դիվանագիտությունը և արևելահայության խնդիրը (19-րդ դարի 30-ական թթ.-1914). Երևան, «Գիտություն», 1999:

վերջին քառորդում»⁴⁶ աշխատություններում: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Հայկական հարցում բրիտանական քաղաքականությունն արտացոլված է պատմաբաններ Ազապի Նասիբյանի⁴⁷, Տիգրան Սարովիսանյանի⁴⁸, Գայանե Մայմուրյանի⁴⁹, Տիգրան Տիգրանյանի⁵⁰ աշխատանքներում:

Ներուցների խնդիրը, «Սայս-Դիլո» համաձայնագրի ձևավորման հարցը լուսաբանվել են հայ և արտասահմանցի պատմաբաններ Մկրտիչ Արգումանյանի⁵¹, Գալրուստ Գալրյանի⁵², Զոն Կիրակոսյանի⁵³, Ս. Հակոբյանի⁵⁴, Բագրատ Բորյանի⁵⁵, Լիլիթ Հովհաննիսյանի⁵⁶, Մանուկ Սոմարյանի⁵⁷, Հարբի Հովհարդի⁵⁸, Էրիկ Նազենի⁵⁹, Ֆ. Կազեմզադեի⁶⁰,

⁴⁶ Բայրամյան Լ. Արևմտյան Հայաստանը անզիական իմպերիալիզմի պլաններում. XIX դարի վերջին քառորդում. Երևան, «Հայաստան», 1982:

⁴⁷ Nassibian A. Britain and the Armenian Question. 1915-1923. London, Croom Helm, 1984.

⁴⁸ Սարովիսանյան Տ. Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում և Մեծ Բրիտանիան (1915-1918թթ.). Երևան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության բանգարան-ինստիտուտ, 2005:

⁴⁹ Մահմուրյան Գ. Գ. Политика Великобритании в Армении и Закавказье в 1918-1920гг. Бремя белого человека. Ереван, «Лусакн», 2002.

⁵⁰ Տիգրանյան Տ. Անգլիան եւ հայերը. Երևան, «Ա. Վարանդեան» հրատ, 1994:

⁵¹ Արգումանյան Ս. Հայաստան 1914-1917. Երևան, «Հայաստան», 1969:

⁵² Գալրյան Գ. Հայաստանը Մեծ տերությունների աշխարհակալական առաջարկումներում (XVI դարից 1917թ.). Երևան, «Գիտություն», 2004: Գալրյան Գ. Հայաստանը և Մեծ տերությունները 1917-1923 թվականներին. Երևան, «Գիտություն», 1999:

⁵³ Կիրակոսյան Զ. Առաջին համաշխարհային պատերազմը և Արևմտահայությունը 1914-1916 թթ., Երևան, «Հայաստան», 1965:

⁵⁴ Հակոբյան Ս. Ս. Արևմտյան Հայաստանը իմպերիալիստական տերությունների պալաններում Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1967:

⁵⁵ Բօրյան Բ. Ա. Армения международная дипломатия и СССР. Часть 1. Москва-Ленинград, Госиздат, 1928.

⁵⁶ Հովհաննիսյան Լ. Հայկական հարցը և Մեծ տերությունները 1914-1917 թվականներին. Երևան, «Զանգակ-97», 2002:

⁵⁷ Somakian M. J. Empires in conflict: Armenia and the Great Powers. 1895-1920. London - New York, I. B. Tauris and Co., 1995.

⁵⁸ Howard H. N. The Partition of Turkey. A diplomatic history 1913-1923. Norman, University of Oklahoma press, 1931.

⁵⁹ Knudsen E. L. Great Britain, Constantinople, and the Turkish Peace Treaty 1919-1922. New York - London, Garland publishing Inc., 1987.

⁶⁰ Kazemzadeh F. The Struggle for Transcaucasia (1917-1921). New York - Oxford, Philosophical Library Inc., George Ronald, 1951.

Վոլֆրամ Գուտլիփի⁶¹, Միխայիլ Լազարեի⁶², Ֆիլիպ Նոտովիչի⁶³ աշխատանքներում:

Առաջին համաշխարհային պատերազմի Ասիական ուղղմարելերում ծավալված իրադարձությունները ուղղմարզմավարական և ուղղմադիվանագիտական դիտանկյունից իրենց արտացոլումն են զույգ ուսու պատմաբան Եվգենի Լուդշուլիստի⁶⁴, պատմաբան Երվանդ Սարգսյանի⁶⁵, Ցարական բանակի գեներալ Եվգենի Մալովլուկու⁶⁶, ուղղմական պատմաբաններ Նիկոլայ Կորսունի⁶⁷, Աշոտ Հարությունյանի⁶⁸, Ս. Կաղիշևի⁶⁹, Ռիշամ Ալլենի⁷⁰ աշխատանքներում:

Դարդանեյան ուղղմագրծողությունը մականաւորեն ներկայացված են ուսու ուղղմական պատմաբան Ալեքսանդր Կոլենկովսկու⁷¹ և բրիտանացի ուղղմածովային տեսաբան Ջուլիան Կորբետի⁷² աշխատություններում:

⁶¹ Գոտլիբ Բ. В. Тайная дипломатия во время Первой мировой войны. Пер. с англ., Москва, Соцэкиз, 1960:

⁶² Лазарев М. С. Крушение турецкого господства на Арабском Востоке (1914-1918гг.). Москва, Изд-во восточ. Лит., 1960.

⁶³ Нотович Ф. И. Дипломатическая борьба в годы Первой мировой войны. том первый. Москва-Ленинград, Изд-во Акад. наук СССР, 1947.

⁶⁴ Лудшувейт. Е. Ф. Турция в годы Первой мировой войны. 1914-1918гг., Москва, Издат. Московского университета, 1966.

⁶⁵ Սարգսյան Ե. Ղ. Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918թթ., Երևան, «Հայաստան», 1964:

⁶⁶ Մասլովսкий Е. В. Мировая война на Кавказскомъ фронте 1914-1917г. Стратегический очеркъ. Париж, «Возрождениè», 1933.

⁶⁷ Корсун Н. Первая мировая война на Кавказском фронте. Оперативно-стратегический очерк, Москва, Воениздат, 1946. Корсун Н. Сарыкамышская операция. Москва, Воениздат, 1937. Корсун Н. Эрзерумская операция. Москва, Воениздат, 1983: Корсун Н. Алашкергская и Хамаданская операции на Кавказском фронте мировой войны в 1915 году. Москва, Воениздат, 1940.

⁶⁸ Արյունյան Ա. Օ. Կавказский фронт. 1914-1917гг., Ереван, «Այաстан», 1971. Հարությունյան Ա. Հ. Ալաշին համաշխարհային պատերազմի ուղղմագիտական պատմությունից (1914-1918). Երևան, «Հայաստան», 1983: Հարությունյան Ա. Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 և ինքնապաշտպանական կոիվները. Երևան, ԳԱ հրատ., 1984:

⁶⁹ Կաdiшев Ա. Բ. Интервенция и гражданская война в Закавказье. Москва, Воениздат, 1960.

⁷⁰ Allen W. E. D., Muratoff P. Caucasian Battlefields. A history of the wars on the Turco-Caucasian border. 1828-1921. Nashville, The Battery press, 1999.

⁷¹ Коленковский А. К. Дарданелльская операция. Москва-Ленинград, Гиз., 1930.

⁷² Corbett J. S. Naval operations. vol. 3. London, Longmans, Green and Co., 1923.

1918 թվականի Բարվի հերոսական պաշտպանության մասին նոր և հետաքրքիր հարցադրումներ են արված պրոֆեսոր Լ. Շիրինյանի «Հայկական զինական ուժը Առաջին աշխարհամարտի վերջնափուլում»⁷³ աշխատանքում:

Աշխատանքը գրելիս որպես արմերավոր սկզբնադրյուր են հանդիսացել նաև Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին լույս տեսած մասնություն, այդ թվում «Քուղանդին» (Կոնստանդնուպոլիս), «Հորիզոն» (Թիֆլիս), «Մշակ» (Թիֆլիս) թերթերից, ինչպես նաև տարբեր տարիներին լույս տեսած մի շարք հանդեսներում և ամսագրերում («Արարատ», «Լարեր Հասարակական զիտուրյունների», «Հայրենիք» «Հայկակեան հայագիտական հանդէս», «Հայկական բանակ», «ՎԵՍ» և այլն) տպագրված հուշագրական և գիտական հոդվածներից:

Առենախտության կառուցվածքն ու բովանդակությունը: Առենախտությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված սկզբնադրյունների ու գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 195 էջ:

Ներածություն բաժնում ներկայացրել ենք թեմայի արդիականությունը, աշխատանքի նպատակներն ու խնդիրները, առենախտության գիտական նորույթն ու կիրառական նշանակությունը, հետազոտման մերողաբանությունը, ժամանակագրական շրջանակները, կառուցվածքն ու բովանդակությունը, թեմայի ուսումնասիրվածության աստիճանը:

Առաջին գլուխը, որը վերնագրված է «Քրիտանական աշխարհառազմավարագիտական միտքը և Հայաստանն ու Այսրկովկասը», բաղկացած է երկու ենթագլուխներից: Առաջին ենթագլուխում, որը վերնագրված է «Քրիտանական աշխարհառազմավարագիտական մտքի ձևավորումը», ներկայացրել ենք բրիտանական աշխարհառազմավարագիտական, ինչպես նաև դրա հետ սերտորեն կապված ռազմառազմավարագիտական մտքի, մասնավորապես, «Ծովային ուժի», «Հարթենդի» և «Սահմանափակ ու անուղակի գործողությունների» աշխարհառազմավարագիտական և ռազմառազմավարագիտական տեսությունների ձևավորման և դրանց գործնական կիրառման հարցերին: Առաջին գլուխ երկրորդ ենթագլուխում, որը վերնագրված է «Հայաստանի և Այսրկովկասի աշխարհառազմավարագիտական նշանակությունը Բրիտանական կայսրության համար», հանգամանորեն հիմնագրություն կայսրության և

⁷³ Շիրինյան Լ. Դ. Հայկական զինական ուժը Առաջին աշխարհամարտի վերջնափուլում. Երևան, «Ամարաս», 2010:

Այսրկովկասի ունեցած կարևորագույն նշանակությունը՝ Մեծ Բրիտանիայի աշխարհառազմավարական շահերի դիտանկյունից:

Երկրորդ գլուխը, որը վերնագրված է «Մերձափորձնելյան տարածաշրջանը աշխարհառազմավարական «Մեծ խաղաղախտակի» վրա՝ Առաջին համաշխարհային պատերազմի առաջին տարիներին», բաղկացած է երկու ենթագլուխներից: Առաջին ենթագլուխում, որը վերնագրված է «Պատերազմի սկզբը: Դարդանելյան ռազմավարական փակուղին», անդրադարձել ենք պատերազմի առաջին տարիներին աշխարհառազմավարական «Մեծ խաղաղախտակի» վրա, մասնավորապես Մերձավոր Արևելյում Մեծ տերությունների միջև ընթացած «Մեծ խաղին»: Ռազմավարագիտության դիտանկյունից հատկապես ըննության առարկա ենք դարձրել Դարդանելյան ռազմագործողությունը: Երկրորդ գլուխ երկրորդ ենթագլուխում, որը վերնագրված է «Ուժերի ռազմավարական հարաբերակցությունը Մերձավոր Արևելյում 1916 թվականին և «Սայր-Դիկ» համաձայնագրի ձևավորումը», վերլուծել ենք Կովկասյան ռազմաճակատում ընթացած ռազմագործողությունների վրա ռազմավարական ինչ ազդեցույն ունեցավ Կուտ-է-Անարայում պաշարված բրիտանական զորամիջի կապիտույցիայի հանգամանքը, ցույց ենք տվել տարածաշրջանում գոյություն ունեցող ուժերի ռազմավարական հարաբերակցությունը՝ «Սայր-Դիկ» համաձայնագրի ձևանունը:

Երրորդ գլուխը, որը վերնագրված է «Մեծ բրիտանիայի աշխարհառազմավարական շահերը Հայաստանում և Այսրկովկասում պատերազմի վերջանիվում», բաղկացած է երեք ենթագլուխներից: Առաջին ենթագլուխում, որը վերնագրված է «Երգնելյայի զինադադարը և բրիտանական նոր ռազմավարությունը Հայաստանում և Այսրկովկասում», լուսաբանել ենք Երգնելյայի զինադադարի ստորագրմանը հաջորդած ժամանակաշրջանում, Հայաստանում և Այսրկովկասում բրիտանական նոր ռազմավարության կիրառումը: Սասնավորապես անդրադարձել ենք Կովկասյան ռազմաճակատից ուսական գործերի հեռանալուն գուշակեու ռազմաճակատում ազգային, այդ թվում հայկական գրամասերի կազմվադրման գործընթացում բրիտանացիների գործադրած զանքերին: Երրորդ գլուխ երկրորդ ենթագլուխում, որը վերնագրված է «Քրիտանական ռազմական առաքելության «առեղծվածը»: 1918 թվականի Սայրայան երրոսամարտերի և Բարվի պաշտպանության ռազմավարական նշանակությունը», ներկայացրել ենք Բարվու ժամանակ բրիտանական ռազմական առաքելության իրական նպատակը, իիմնավորել պատերազմում Դաշնակցիների տարած ընդհանուր հաղթանակի գործում Սայրայան երրոսամարտերի և Բարվի պաշտպանության ռազմավարական նշանակությունը», ներկայացրել ենք Բարվու ժամանակ բրիտանական ռազմական առաքելության իրական նպատակը, իիմնավորել պատերազմում Դաշնակցիների տարած ընդհանուր հաղթանակի գործում Սայրայան երրոսամարտերի և Բարվի պաշտպանության

ունեցած ռազմավարական կարևորագույն նշանակությունը: Երրորդ գլխի երրորդ ենթագլխում, որը վերնագրված է «**Սուտքոսի զինադարձը և Հայաստանն ու Այսրկովկասը»՝ ներկայացրել ենք Սուտքոսի զինադարձի ստորագրմանը նախորդած ժամանակահատվածում Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև ընթացած զաղոսնի դիվանագիտական պայքարը, անդրադարձել զինադարձի համաձայնագրով բրիտանական գորքերի կողմից օկուպացված Այսրկովկասում՝ նորանկախ երեք հանրապետությունների նկատմամբ բրիտանացիների վարած քաղաքականությանը այն դիտարկելով «ուժերի ռազմավարական հավասարաշղության պահպանման» սկզբունքով:**

Եղանակացություն բաժնում ներկայացվել են թեմայի վերաբերյալ հեղինակի կողմից արված եղանակումները

1. 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին, աշխարհի Մեծ տերություններում, այդ թվում Մեծ Բրիտանիայում հասունանում և ձևափոխում է աշխարհառազմավարագիտական միտքը: Այդ գործում իրենց մեծ ներդրումն են ունենում «Ծովային ուժի» տեսության հիմնադիրներից ծովակալ Ֆ. Կոլլիմը ու ռազմածովային տեսաբան Զ. Կորքետը, «Աշխարհառազմավարական կետ» հասկացության հեղինակ, ծովակալ Զ. Ֆիշերը, «Հարթլենդի» տեսության հիմնադիր աշխարհագրագետ և խոշոր տեսաբան Հ. Մարինդերը: Բրիտանական աշխարհառազմավարագիտական մտքի ձևավորմանն գուգահեռ զարգացավ նաև բրիտանական ռազմառազմավարագիտական միտքը, որն ավելի ուշ իր գագաթնակետին հասցեց նշանակոր ռազմավարագետ Լ. Հարտը: Նա հակադրվելով ռազմագիտության մեջ դասական դարձած գերմանացի ռազմական տեսաբան Կ. Կառովկիցի «Բացարձակ պատերազմի» տեսությանը, առաջ քաշեց «Սահմանավակ և անուղղակի գործողությունների» տեսությունը: Բրիտանական աշխարհառազմավարագիտական և ռազմառազմավարագիտական տեսությունները Մեծ Բրիտանիայի ռազմաքաղաքական դեկավորության կողմից գործական հարթության վրա դրվեցին Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին

2. Անծովյան ներուցները Հայաստանի և Այսրկովկասի հետ միասին հանդիսանում էին «բնական պատնեշ» Մեծ բրիտանիայի համար կենսական նշանակություն ունեցող ծովային առևտրական ուղիների ու Պարսից ծոցով բրիտանական կայսերական նավատորմին մատակարարվող նավթի անվտանգության ապահովման և բրիտանական գլխավոր գաղութ Հնդկաստանի դեմ ռուսական (ավելի ուշ՝ բուջիկյան) և գերմանա-թուրքական հնարավոր սպառնալիքներից պաշտպանելու տեսանկյունից: Միաժամանակ, բրիտանացիները ձգտում էին տիրանալ Բարպի նավթին, որը պարսկական և

միջազգեստյան նավթային պաշարների հետ միասին կրավարարելին բրիտանական նավատորմի վառելիքի պահանջարկը:

3. Առաջին համաշխարհային պատերազմի սկզբում Արևմտյան ռազմաճակատում Կայծակնային պատերազմի ռազմավարության ձախողումը ստիպեց գերմանացի ռազմավարագետներին արագացնելու Օսմանյան կայսրության մուտքը պատերազմ, դրանով իսկ նոր ռազմաճակատների բացումը Արևելքում՝ ընդուն Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի: Իր հերթին Մեծ Բրիտանիայի ռազմաքաղաքական դեկավորությունը, որն իր հերթին շահագրգության մեջ ներքաշելու հանգամանքով, ինչը հնարավոր կրաքանչեր նրա վերջնական բաժանումը, փակում է Ջիբրալթարի ներուցն ու Սուեզի ջրանցքը Միջերկրական ծովում գործող գերմանական հածանավերի առաջ և միաժամանակ հրամարվելով դրանք խորտակելու ծրագրից՝ բոյլ տայիս հածանավերի մուտքը Դարդանել: Դա էլ իր հերթին վերջնականապես լուծում է Օսմանյան Թուրքիայի պատերազմի մեջ մտնելու հարցը:

4. Պատերազմի առաջին տարիներին Ներուցներին և Կոստանդնուպոլիսին տիրելու համար Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի և Գերմանիայի միջև պայքարն ավարտվեց Դաշնակիցների կողմից 1915 թվականին ձեռնարկված Դարդանելյան ռազմագործողության «պարտությամբ»: Սակայն իրականում Դաշնակիցները ոչ թե ձախողել են ռազմագործողությունը, այլ պարզապես չեն ցանկանալ այդ պահին գրավել Կոստանդնուպոլիսն ու Ներուցները: Քանի որ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև 1915 թվականի մարտի 18-ին ստորագրված զարմանի համաձայնագրով Կոստանդնուպոլիսն ու Ներուցները պիտի փոխանցվեին Ռուսաստանին: Ավելին, ռազմագործողության «ձախողումը», խախտեց Եվրոպական Մեծ տերությունների միջև գոյություն ունեցած ուժերի ռազմավարական հավասարաշղությունը, ինչն էլ իր հերթին հնարավորություն տվեց Օսմանյան կառավարության իրականացնելու Հայոց ցեղասպանությունը:

5. Թեև Ռուսաստանը պաշտոնական պատերազմի մեջ էր մտել Սերբիային պաշտոնական պատրվակով, իրականում, սակայն, նա իր նշանառության տակ էր վերցրել Կոստանդնուպոլիսը, Ներուցներն ու Արևմտյան Հայաստանը: Հետևաբար Ռուսաստանին պատերազմում պահելու և նրա հսկայական ռուսությունը գերմանական մեքնայի դեմ օգտագործելու համար Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան պարբերաբար ստիպված էին Ռուսաստանին խոստանալ (թղթի վրա) Ներուցներն ու Կոստանդնուպոլիսը: Միաժամանակ Գերմանիան իր հերթին տարիներ շարունակ գաղտնի բնակացություններ էր վարում

Ռուսաստանի հետ՝ Նեղուցների հարցում վերջինիս հետ զիջումների գնալու գնով, նրան պատերազմից դուրս հանելու նպատակով:

6. 1916 թվականի առաջին կեսին գրքնականում ավարտելով Արևմտյան Հայաստանի գրավումը, ռուսական գորքերը, միաժամանակ, երկու ուղղություններով՝ Արևմտյան Հայաստանից և Պարսկաստանից առաջ շարժելով մոտենում են Մոսուլին ու Բաղդադին: Վերջիններիս գրավումը ռուսական գորքերի կողմից կանխելու նպատակով «խորամանկ ալբիոն» զոհաբերում է Բաղդադի տակ օսմանյան գորքերի կողմից պաշարված գեներալ Զ. Թաունսենդի դիվիզիան, որն առանց մարտի անձնատուր է լինում իրենից կրկնակի պակաս թուրքական ուժերին: Սա թույլ է տալիս օսմանյան բանակին համարվելու ու վերախմբավորվելու և ծանր հարված հասցնելու ռուսական բանակին՝ նրան ետ շարտելով Մոսուլից և Բաղդադից: Սա հանգեցնում է հայտնի երակողմ «Սայրս-Դիկո-Սագոնով» համաձայնության վերջնական ձևավորմանը, որն արդյունք էր տվյալ պահին Սահական ռազմաճակատներում առկա ուժերի ռազմավարական հարաբերակցության և միաժամանակ (Կոստանդնուպոլիսը և Նեղուցները ռուսական կողմին խստանալով) Մուսաստանին՝ ընդդեմ Գերմանիայի, պատերազմում պահելուն ուղղված բրիտանական ռազմավարության: Ավելին այդ համաձայնությամբ գնվեց Արևելակորպական ռազմաճակատում ռուսական գորքերի կողմից իրականացված նշանավոր «Բրուսիլվան Ճեղումը», որը փրկեց «Վերդենյան մասղացի» մեջ հայտնված Դաշնակիցների բանակները:

7. Ռուսաստանին պատերազմից դուրս բերելուն և պատերազմը մեկ ռազմաճակատով շարունակելուն ուղղված գերմանական կողմից շանքերը պատերազմի վերջնափուլում ի վերջո պսակվեցին հաջողությամբ: Գերմանիայի աջակցությամբ Ռուսաստանում բոլշևիկների կողմից իրականացված հեղաշրջումը և դրա արդյունք Երգիշայի գինադադարի ստորագրումն ու ռուսական բանակների կողմից Կովկասյան ռազմաճակատը լինելու հանգամանքը, ստիպեց բրիտանացիներին Հայաստանում և Այսրկովկասում անցնելու նոր ռազմավարության: Այն ենթարկում էր ակտիվ մասնակցություն Կովկասյան ռազմաճակատում ազգային, այդ թվում, հայկական գորամասերի կազմավորման գործընթացին, ներառյալ ռազմական և ֆինանսական օգնության տրամադրումը, և միաժամանակ Հայաստանում և Այսրկովկասում ազգային անկախ պետությունների («բուֆերային գոտու») ստեղծում: Այս բայերով բրիտանական ռազմավարագետները խնդիր ունեին կանխել գերմանա - թուրքական ուժերի առաջիստացումը դեպի Արևելք:

8. 1917 թվականի վերջին Կովկասյան ռազմաճակատում ձևավորված ազգային գորամասերից թերևս միակ մարտունակը Հայկական առանձին բանակային կորպուսն էր, որը 1918 թվականի սկզբին փաստացի միայնակ ստանձնեց Կովկասյան ռազմաճակատի պաշտպանությունը: Հայկական Կորպուսի գորամասերի կողմից Մայիսյան հերոսամարտերում տարած հաղթանակը, ինչպես նաև հիմնականում հայ գինվորականությունից կազմված գորամասերի կողմից Բարվի հերոսական պաշտպանությունը 8 ամսով հետաձգեցին թուրքական ուժերի մուտքը Բարու: Դա կանխեց բարվի նավթի տեղափոխությունը Արևմտյան ռազմաճակատում վատելիքի պաշարները սպառած գերմանական բանակին, ինչն էլ արագացրեց վերջինիս պարտությունը: Ավելին Բարվի վրա կենարունացներով հսկայական ուժեր, Օսմանյան բանակը պարտություն կրեց Պալեստինյան ռազմաճակատում, որտեղ վճռորոշ դարձավ «Արևելյան լեգոննի» («Հայկական լեգոննի») կողմից Սարարայի բարձունքում գերմանա - թուրքական պաշտպանական զգի ճեղքումը:

9. Բարվի պաշտպանությանը մասնակցելու պատրվակով 1918 թվականի ամռանը քաղաք Ժամանած փորքաթիվ բրիտանական ռազմական առաջելությունն, իրականում, սակայն, պիտի կատարեր հատուկ առաջադրանք: Սասնավորապես, Միջազգետքից գրահապատ ավտոմեքենաներով հսկայական ուժեր Բարվ բերելու պատրվակով, առաջելությունը Պարսկաստան և Միջազգետք է տեղափոխում Բարվում պահեստավորված բենզինի գրեթե ողջ պաշարը, որպեսզի քաղաքը գրավելուց հետո այդ պաշարները չհայտնվեն թուրքական կողմից ձեռքը և չտեղափոխվեն Արևմտյան ռազմաճակատ:

10. Պատերազմում պարտված Օսմանյան կայսրության հետ Սույնրուսում գինադադարի ստորագրմանը նախորդող օրերին դիվանագիտական գաղտնի և կատաղի պայքարի արդյունքում, բրիտանացիներին հաջողվում է դուրս մղել ֆրանսիական կողմին բանակցային գործընթացից: Արդյունքում թեև գինադադարը ստորագրվեց Դաշնակիցների անունից, իրականում, սակայն, դա փաստացի Օսմանյան կայսրության կապիտույացիան էր բացառապես Մեծ Բրիտանիայի առաջ: Զինաբարարով բրիտանական գորքերն իրավունք ստացան օկուպացնել հսկայական տարացքներ, այդ թվում ռազմավարական կարևորագույն նշանակություն ունեցող Նեղուցները, Կոստանդնուպոլիսն ու Այսրկովկասը, ներառյալ տեղի երկարուղային ցանցը և Բարու - Բարթու նավթատարը: Միաժամանակ, սակայն, Դաշնակիցների կողմից չօկուպացվեց Արևմտյան Հայաստանն ու չղինարաբկվեց Անատոլիայում կուտակված թուրքական գորքը, ինչն արված էր հեռահար հաշվարկով՝ ընդեմ ռուսական հնարավոր առաջիստացման: Այս ամենը, սակայն, կարձ ժամանակ անց,

վերածվեց ռազմական աղետի թե՛ Հայաստանի Հանրապետության և թե՛ Մեծ Բրիտանիայի ու համապես նրանց դաշնակից հունական բանակի համար:

11. Բրիտանական գործերի կողմից երկու տարի օկուպացված Այսրկովկասում բրիտանացիները վարում էին այսրկովկասյան երեք հանրապետությունների միջև ուժերի հավասարակշռությունը՝ պահպանելու իրենց ավանդական քաղաքականությունը օգտագործելով նորանկախ հանրապետությունների միջև առկա տարածքային վեճերը:

Առենախտության հիմնական դրույթներն արտագրված են հետինակի հետևյալ հրապարակումներում

1. Բրիտանական աշխարհառազմավարագիտական մտքի ձևավորումը, «Պատմություն և Հասարակագիտություն» տարեգիրք, N 2, Երևան, 2016, էջ 357 - 369:
2. Առաջին աշխարհամարտում 1918 թվականի Սայիսյան հերոսամարտերի և Բարձրի պաշտպանության ռազմավարական նշանակության հարցի շուրջ, «Հայկական բանակ», N 1, Երևան, 2016, էջ 116 - 125:
3. Փաստաթղթեր Հայկական Առանձին բանակային կորպուսի պատմության վերաբերյալ (1917-1918թթ.), «Բանբեր Հայաստանի արխիվների», N 125, Երևան, 2017, էջ 21 - 44:
4. Դարդանելյան ռազմավարական փակուլին, «Պատմաբանասիրական հանդես», N 1, Երևան, 2018, էջ 161 - 173:
5. Ուժերի ռազմավարական հարաբերակցությունը Մերձավոր Արևելքում 1916 թվականին և «Սայր-Դիլո-Սագոնով» համաձայնագրի ձևավորումը, «Ազգ, պետություն, հայրենիք. պետականության զաղափարը» երրորդ միջազգային գիտաժողովի նյութեր, Խ. Արովյանի անվ. ՀՊՍՀ Պատմության և Իրավագիտության ֆակուլտետ, Երևան, 2018, էջ 138 - 150:
6. Նազարյան Հ. Մուլյոսի գինադադարը, «Կանքեղ», N 2, Երևան, 2018, էջ 137 - 145:

**НАЗАРЯН АЙК ВОЛODYЕВИЧ
ГЕОСТРАТЕГИЧЕСКИЕ ИНТЕРЕСЫ ВЕЛИКОБРИТАНИИ В
АРМЕНИИ И ЗАКАВКАЗЬЕ В ГОДЫ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ
(1914-1918гг.)**

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 «Всемирная история, международные отношения». Защита состоится 27 декабря 2018г., в 12:00, на заседании специализированного совета 006 «Всемирная история», действующего при Институте востоковедения НАН РА, по адресу: 0019, Ереван, пр. М. Баграмяна, 24/4.

РЕЗЮМЕ

Цель диссертационной работы - изучение геостратегических интересов Великобритании в Армении и Закавказье в годы Первой мировой войны. Наша работа впервые представляет данную тему с геостратегической и военно - стратегической точки зрения, принимая за основу принципы – «стратегические соотношения сил» и «стратегический баланс сил».

Диссертация написана на основе первоисточников, в том числе архивных материалов и мемуаров, а также научной литературы на армянском, русском и английском языках.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованных источников и литературы.

В **введении** мы представили актуальность темы, цели и задачи, хронологические рамки и структуру работы, научную новизну и практическое значение диссертации, методологию исследования, хронологические рамки, уровень изучения темы.

Первая глава, которая озаглавлена «**Британская геостратегическая мысль и Армения и Закавказье**», состоит из двух параграфов. В первой главе представлено формирование британской геостратегических и военно - стратегических теорий «Морской силы», «Хартленда», «ограниченных и непрямых действий» и об их практическом применении. Обстоятельно обосновали важнейшее значение Армении и Закавказья с точки зрения геостратегических интересов Великобритании.

Вторая глава, которая озаглавлена «**Ближневосточный регион на «Большой игровой доске» в первые годы Первой мировой войны**», состоит из двух параграфов. Во второй главе отражается «большая игра» Великих европейских держав на геостратегической «большой игровой доске» в первые годы войны на Ближнем Востоке. Со стратегической точки зрения мы проанализировали, какое стратегическое воздействие оказали Дарданелльская (Галлиполийская) военная операция и капитуляция осажденной в Кут - эль - Амаре британской военной группировки на военные операции на Кавказском фронте, показали стратегические соотношения сил на Ближнем Востоке в период формирования соглашения «Сайкс - Пико».

Третья глава, которая озаглавлена “Геостратегические интересы Великобритании в Армении и Закавказье в конце войны”, состоит из трех разделов. В третьей главе мы осветили новую британскую стратегию в Армении и Закавказье в конце войны, после подписания Эрзинджанского мирного договора и оставления русских войск Кавказского фронта. В частности, британская стратегия предполагала создание национальных независимых государств в Армении и Закавказье, как буферную зону, и формирование национальных военных частей на Кавказском фронте, так как оборона этого фронта одновременно способствовала удачной военной операции британских войск на Месопотамском и Палестинском фронтах. Мы представили реальную цель британской военной миссии в Баку, обосновали стратегическое значение Майских героических сражений и обороны Баку в деле общей победы Союзников в войне. Представлена секретная дипломатическая борьба между Великобританией и Францией в канун подписания Мудросского перемирия и британская политика в отношении новообразованных республик в Закавказье, оккупированном, согласно этому перемирию, британскими войсками, принимая за основу принцип «стратегический баланс сил».

В заключении представлены основные результаты нашего исследования.

HAYK V. NAZARYAN
THE GEOSTRATEGIC INTERESTS OF GREAT BRITAIN IN
ARMENIA AND TRANSCAUCASSIA IN THE YEARS OF THE FIRST
WORLD WAR (1914-1918)

The defense of dissertation will take place at 12:00, on 27 December of 2018, at the meeting of the specialized council 006 “World History” at the Institute Of Oriental Studies of NAS RA. Address: Yerevan, 0019, Marshal Baghramyan ave, 24/4. The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the field of “World History, International Relations” 07.00.02

SUMMARY

The goal of this dissertation research is to study the geostrategic interests of Great Britain in Armenia and Transcaucasia in the years of the First World War (1914-1918). For the first time, this work presents the theme, mainly by the aspects of geostrategical and military strategical review, having the principles of The Strategic Balance of Power and The Correlation of Forces.

The dissertation is written on the basis of primary sources, including archives and memories and the Armenian, English and Russian scientific literature.

The dissertation consists of an Introduction, three chapters, conclusions and the list of used primary sources and literature.

The introduction substantiates the relevance and chronological framework of the research, sets the main goal and objectives, presents the scientific novelty and the applied importance of the dissertation, methodological basis of the research and the literature review.

The first chapter, which is entitled “The British Geostrategical thought and Armenia and Transcaucasia”, consists of two paragraphs. The chapter examines the formation of the British Geostrategical and military strategical theories of “The Sea Power”, “Heartland”, “Limited and indirect actions”. We have substantiated importance of Armenia and Transcaucasia from the view point of the geostrategic interests of Great Britain.

The second chapter, which is entitled “The Middle Eastern Region on the Geostrategic “Big Board” in the First years of the First World War”, consists of two paragraphs. The chapter presents the geostrategic “Great Game” between Europe Great powers on the Geostrategic “Big Board” in the Middle East in the beginning of the First World War. We have analysed the strategic influence of the military operation of the Dardanelles (Gallipoli) and surrender of the British troops in Kut Al Amara on the military operations on the Caucasian Front. We indicated the Correlation of Forces in the Middle East in formative stage of The Sykes – Picot Agreement.

The third chapter, which is entitled “The Geostrategic Interests of Great Britain in Armenia and Transcaucasia in the Last Period of the First World War”, consists of three paragraphs. The chapter presents The British new strategy in Armenia and Transcaucasia in the successive period of the Armistice of Erzincan, as soon as the Russian troops left the Caucasian Front. Particularly, We have illustrated the great efforts of British in establishing of the national independent states in Armenia and Transcaucasia as a buffer zone, and forming the national military units on the Caucasian Front as the defence of the Caucasian Front also contributed to successful military operations of the British troops on the Mesopotamian and Palestinian Fronts. We have presented the real purpose of the British military mission in Baku and the strategic importance of May heroic Battles and the Defence of Baku on the context of the general victory of Allies in the First World War. We have discussed the secretly diplomatic struggle between Great Britain and France on the eve of the signing of the Armistice of Mudros and British policy concerning to the three independent states in occupied Transcaucasia having the principle of The Strategic Balance of Power.

The main results of our research are presented in the conclusion.

